ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱԿՆԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

ՈՐՈՇՈՒՄ

18 հունվարի 2016թ թիվ 01 Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնաշենի գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի հունիսի 27-ի թիվ 5 նիստի թիվ 2 որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ակնաշեն համայնքի 011-012 ծածկագրի տնամերձ հողամասին տրամադրել հասցե՝ 5 փողոց թիվ 28:

2. Սույն որոշման մեկ օրինակը պետական գրանցման համար ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանմանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գյուղապետ Մ.Միսակյան

2016թվական
հունվարի 18
գ.Ակնաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱԿՆԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2016թ

թիվ 02Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊՈՒՐԱԿԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԾԱՌԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով Հայաստանի Հանրապետության , <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի 66-րդ հոդվածով, հիմք ընդունելով Ակնաշենի գյուղական համայնքի ավագանու 2010 թվականի հունվարի 29-ի թիվ 02 Ա որոշման 2-րդ կետի պահանջը և Ակնաշենի գյուղապետարանի 2015 թվականի գույքագրման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 24-ին կազմված ակտը:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ակնաշեն համայնքի Հ. Ավետիսյան 1-ի նրբանցքի 1 տան բնակիչ Գարեգին Նահապետի Հովհաննիսյանի նկատմամբ կիրառել տուգանք՝ 100000 /մեկ հարյուր հազար/ դրամի չափով, համայնքային սեփականության պուրակի տարածքում 1/մեկ/ հատ քսանամյա <<Կենաց ծառի>> հատման համար :
2. Տուգանքի մուծման համար սահմանել 15-օրյա ժամկետ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գյուղապետ Մ.Միսակյան

2016թվական
25 հունվար
գ.Ակնաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

ՈՐՈՇՈՒՄ

27 հունվարի 2016թ

թիվ 3

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնաշենի գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի հունիսի 27-ի թիվ 5 նիստի թիվ 2 որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ակնաշեն համայնքի 004-002 ծածկագրի տանը տնամերձ հողամասով տրամադրել հասցե՝ Թումանյան փողոց թիվ 3 :
2. Սույն որոշման մեկ օրինակը պետական գրանցման համար ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանմանը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գյուղապետ Մ.Միսակյան

2016թվական
27 հունվարի
գ.Ակնաշեն